

ФОНД НАЦИОНАЛЬНЫЙ  
УНИВЕРСИТЕТ  
АРХИТЕКТУРЫ И  
СТРОИТЕЛЬСТВА  
АРМЕНИИ



NATIONAL UNIVERSITY OF  
ARCHITECTURE AND  
CONSTRUCTION OF  
ARMENIA FOUNDATION

Գ Ի Տ Ա Կ Ա Ն Խ Ո Ր Հ Ո Ւ Ր Դ

Ք Ա Ղ Վ Ա Ծ Ք

*Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային*

*համալսարանի գիտական խորհրդի 2020թ. հուլիսի 08-ի*

*№01-07/20 նիստի արձանագրությունից*

**Լսեցին-** Համալսարանի աշխատողների գիտահետազոտական արդյունքների հրատարակումը «Web of Science» և «Scopus» գիտատեղեկատվական շտեմարաններում ընդգրկված պարբերականներում խթանելու վերաբերյալ ՃՀՀԱՀ գիտական խորհրդի 17.04.2018թ. №01-04/18 նիստում ընդունված որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:

Հաշվի առնելով գիտական աշխատանքների գծով պրոռեկտորի ժ/պ Կ.Ազատյանի և գիտական քաղաքականության վարչության պետ Մ.Բարսեղյանի 03.07.2020թ. №117/01 զեկուցագրով առաջարկվող փոփոխությունները և լրացումները՝

### **Որոշեցին՝**

Հաստատել ստորև ներկայացված տարբերակը՝ փոփոխություններով, լրացումներով և նոր խմբագրությամբ:

1. Համալսարանի աշխատողների, ուսանողների, ասպիրանտների և հայցորդների գիտահետազոտական գործունեության արդյունավետությունը բարձրացնելու և «Web of Science» և «Scopus» գիտատեղեկատվական շտեմարաններում ընդգրկված և ազդեցության գործակից (այսուհետ՝ ԱԳ (Impact Factor)) ունեցող (ըստ «Institute for Scientific Information (ISI JCR)»-ի տվյալների) պարբերականներում հոդվածների հրատարակումը խթանելու նպատակով, «Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամի աշխատողների խրախուսման կարգի 14-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն սահմանել խրախուսման վճարի չափ:

2. «Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամում աշխատողների, ուսանողների, ասպիրանտների և հայցորդների խրախուսման վճարի տրամադրումն իրականացնել համաձայն հետևյալ աղյուսակի՝

Հ/հ	Գործունեության նկարագիր	Պարբերականի ազդեցության գործակից (ԱԳ)	Միավոր աշխատանքի արժեք (ՄԱԱ) (ՀՀ դրամ)	Մեկ աշխատողին/սովորողին հասանելիք գումարի չափ
1.	«Scopus» միջազգային գիտատեղեկատվական շտեմարանում ընդգրկված գիտաժողովի նյութերի ժողովածու	ԱԳ չունեցող ԱԳ=0	30.000	ՄԱԱ-ը բաժանած ՀՀ-ում աշխատող/սովորող համահեղինակների թվին
2.	Հոդվածի տպագրում «Web of Science» և «Scopus» միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում ընդգրկված և ԱԳ ունեցող պարբերականներում	0.5-ից մինչև 1 0.5<ԱԳ<1	120.000	ՄԱԱ-ը բաժանած ՀՀ-ում աշխատող/սովորող համահեղինակների թվին
		1-ից մինչև 2 1 ≤ ԱԳ ≤ 2	160.000	ՄԱԱ-ը բաժանած ՀՀ-ում աշխատող/սովորող համահեղինակների թվին
		2-ից բարձր ԱԳ > 2	200.000	ՄԱԱ-ը բաժանած ՀՀ-ում աշխատող/սովորող համահեղինակների թվին

3. Սույն աղյուսակի կետերից որևէ մեկով սահմանված գումարին ավելացնել 50000 ՀՀ դրամ, եթե հողվածը տպագրված է գիտական աստիճան ունեցող արտասահմանյան համահեղինակների հետ (Արտասահմանյան է համարվում այն համահեղինակը, ով որպես աշխատանքի վայր նշել է արտասահմանյան գիտակրթական կազմակերպություն):

4. Սահմանված գումարները վճարել համալսարանի այն աշխատողին, ուսանողին, ասպիրանտին և հայցորդին, ովքեր հրատարակված գիտական հոդվածում որպես իրենց աշխատավայր նշել են «Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամի անվանումը: Եթե հոդվածի հեղինակը, որպես իր աշխատավայր նշել է մեկից ավելի կազմակերպություններ, ապա նրան վճարել հասանելիք գումարի կեսը:

5. Խրախուսման վճարը ստանալու համար հեղինակը գիտական հոդվածի արտատիպը ներկայացնում է համալսարանի Գիտական քաղաքականության վարչություն, որտեղ հավաստիանալով ներկայացված փաստաթղթերի համապատասխանության մեջ, կազմվում և համալսարանի ռեկտորի հաստատման է ներկայացվում խրախուսման վճար տրամադրելու վերաբերյալ զեկուցագիրը՝ վավերացված գիտական աշխատանքների գծով պրոռեկտորի կողմից:

6. Ուժը կորցրած ճանաչել «Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» ի գիտական խորհրդի 17.04.2018թ թիվ 01-04/18 որոշումը:

7. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում 2020թ. սեպտեմբերի 1-ից՝ մեկ տարի ժամկետով:

ԾՇՀԱՀ գիտական խորհրդի նախագահ  
ռեկտորի ժ/պ, Կ. Գ. Գ. Գ.

Գիտական քաղաքականության  
վարչության ղեկավար  
Կ. Գ. Գ., ղոցել



*[Handwritten signature]*  
Ե.Վ. Վարդանյան

*[Handwritten signature]*  
Լ.Ն. Լևոնյան